# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 31

**Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. մայիսի 27- ին կայացրած նիստի**

Նիստին մասնակցում են հանձնաժողովի 7 անդամներ:

*Օրակարգում՝*

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով << Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Եղեգնաձոր քաղաքի բնակիչներ Ռազմիկ Եդիգարյանի, Մարտին Մկրտչյանի,Վայք քաղաքի բնակիչներ Մարինե Բաբայանի, Սոֆյա Կարապետյանի, Շատին գյուղի բնակիչ Սերյոժա Բաբլանյանի դիմումները ուղղված << Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

**<u>ՈՐՈՇԵՑ</u>**

Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից պետական պատվերի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Ռազմիկ Եդիգարյանին, Վայք քաղաքի բնակչուհի Սոֆյա Կարապետյանին տրամադրել <<Վանաձոր ԱՍԱՐ>>, Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Մարտին Մկրտչյանին, Շատին գյուղի բնակիչ Սերյոժա Բաբլանյանին <<Գանձաղբյուր>>, իսկ Վայք քաղաքի բնակչուհի Մարինե Բաբայանին <<Արզնի>> առողջարանի ուղեգիր:

Հանձնաժողովի նախագահող՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ց.Բաբայան